

Խորեն Գրիգորյան
Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի
պատմության ազգային թանգարան, գիտաշխատող
Գիտ. ղեկ.՝ պ. գ. թ., դոց. Մ. Գաբրիելյան
Էլ. փոստ՝ xorenbask86@gmail.com

ԱՄԱՆՈՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՄԱՆՈՒ

Տոները բարդ սոցիալական և կենցաղամշակութային երևույթներ են: Դրանց նվիրված մեծ թվով գիտական գրականություն կա փիլիսոփայության, սոցիոլոգիայի, մշակութաբանության ուսումնասիրությունների ոլորտներում¹: Սակայն դրանցից զատ իր ուրույն տեղն ունի տոների ուսումնասիրությունը ազգագրական տեսանկյունից: Ազգագրական տեսանկյունից տոնը, լինի մեղ ընտանեկան, թե հասարակական նշանակության, դա իրենից մի համալիր է ներկայացնում, որն ունի ծագում, զարգացում հաճախ նաև անկում: Կարևոր խնդիր է հանդիսանում պարզել, թե դա տարբեր հասարակական շերտերի մոտ ինչ կենցաղավարում ունի, այդ կենցաղավարման ինչպիսի նմանություններ և տարբերություններ կան, թե իր ծագման օրվանից ցայսօր ինչ փոփոխությունների է ենթարկվել և թե այդ փոփոխությունները ինչ հիմնախնդիրների հետ են կապված:

Յուրաքանչյուր տոն իրենից ներկայացնում է մի յուրահատուկ միկրոհամակարգ, որտեղ այս կամ այն չափով առկա են կենցաղի և մշակույթի գրեթե բոլոր տարրերը՝ բնակավայր, բնակարան, ազգակցական, դրացիական, ընտանեկան հարաբերություններ, նախնիների հիշատակ, ամուսնական ծիսաշար, երաժշտական ստեղծագործություններ, խաղեր, ուսեստ, տնտեսական գործունեության ավանդական փուլեր՝ այդ աշխատանքների հաջողություններն ապահովող ծեսերով ու սովորություններով և այլն: Վերը նշված տարրերի նույնիսկ այս ոչ ամբողջական ցանկը վկայում է այն մասին, թե կենցաղամշակութային ինչպիսի շերտեր են պարունակում տոները²:

Տոնակատարությունների և տոնահանդեսի հայկական մշակույթն ունի հազարամյակների ավանդույթ և մոտ հարյուր տարի առաջ ղեռ կարելի էր ակնատես լինել ավանդական տոնահանդեսի հարուստ ու բազմազան դրսևորումների: Քանի որ տոներն ունեն նաև հասարակական հարաբերությունների կարգավորման գործառույթ, բնականաբար, հայոց տոնակատարություններին կամ դրանց այս կամ այն փուլին անձի, ընտանիքի անդամների, ազգականների, սոցիալական խմբերի, կանանց կամ տղամարդկանց, երիտասարդների և տարեցների մասնակցությունն իմաստավորված էր ու ծառայում էր կամ առկա հարաբերությունների վերահաստատմանը, կամ՝ դրանց մերժմանն ու նոր հարաբերությունների ձևավորմանն ու հաստատմանը³:

Ամանորը նշվում է հունվարի մեկին, փոխարինել է Նավասարդ ավանդական տոնին: Հայոց մեջ պաշտոնապես մուտք է գործել XVIII դ. Սիմեոն Երևանցի կաթողիկոսի տոնացույցի համաձայն: Տոնի հիմնական հատկանիշներն են՝ տոնական ուսեստը (բախտագուշակ տարեհաց, տոնական կերակուրներ, քաղցրավենիք, խմորեղեն և այլն), գոտեկախի սովորույթը, ջուրը, կրակը, թթխմորը նորոգելը, առարկայական, ֆիզիկական ու հոգևոր-բարոյական (խռովությունները վերացնելը, պարտքերը մարելը, չարը տնից հեռացնելը և այլն) մաքրությունը, փոխայցելությունները և այլն⁴:

Հունվարի մեկին տարին սկսելու և Նոր տարվա սկզբի տոն նշելու սովորույթը

¹ Будина О. Р., Шмелева М. Н., Общественные праздники в современном быту русского городского населения, СЭ, н. 6, 1979, էջ 3-9:

² Մկրտչյան Ա., Տոները հայոց արդի կենցաղում, «ՀԱԲ», 22, Երևան, 2007, էջ 133:

³ Խառատյան Հ., Տոնը և տոնահանդեսի մշակույթը Հայաստանում, Երևան 2010, էջ 5:

⁴ Ստեփանյան Ա., Տոներ, ոչ նյութական մշակութային ժառանգություն, էջ 56:

հայոց մեջ ընդհանրացել է համեմատաբար ոչ վաղ անցյալում: Արևմտահայոց շրջանում, Կիլիկիայի տարածքի հայերի մեջ, մասամբ՝ արևելահայ որոշ շրջաններում այն կայունացած արարողակարգ ուներ: Սակայն մինչև 20-րդ հարյուրամյակի սկիզբը արևելահայ որոշ շրջաններում Նոր տարուն զուգահեռ, ավելի խանդավառ ու ջերմորեն նշում էին Նավասարդը՝ որպես Նոր տարի, և Նավասարդը նշող շրջաններում հունվարի 1-ին Նոր տարին նշելը սահմանափակվում էր ընդամենը միմյանց շնորհավորելով: Այնուամենայնիվ տոնակատարությունն արդեն կայունանում էր և նրանում ամրագրվում էին տարեմտին կամ Նոր տարուն բնորոշ սովորույթները¹: Սիսիանում ավանդական ամանորյա տոնակատարության մասին հիշատակություն պահպանված է Ե. Լալայանի «Սիսիան»-ում, որտեղ մասնավորապես տակություն կա հայկական նոր տարին, Նավասարդի մեկը, որ գալիս է օգոստոսին: Ոչ մի շնորհավորությամբ չէ լինում. երբեմն միայն մոտիկ անձնաւորություններ միմեանց մոտ հաւաքվելով՝ ուտում, խմում, ուրախանում են»²:

Ներկայումս Սիսիանում ամանորյա պատրաստությունները սկսվում են դեկտեմբերի սկզբին, այդ շրջանում է, որ հիմնական առևտրի նախահաշվարկներն են արվում: Ընտանիքում ամանորյա պատրաստությունների շրջանում կատարվում է «աշխատանքի բաժանում»: Ի տարբերություն ավանդական հասարակության ընդունված նորմերի՝ դրա հիմնական ձեռնարկողը տանտիկինն է, ում ձեռքում էլ կենտրոնացված են ամբողջ ծախսի հաշվարկը, առևտրի կազմակերպումը, հիմնական առևտուր կատարողն էլ է հենց տանտիկինը: Ս. Մկրտչյանը նշում է. «Հայտնի է, որ կանայք տղամարդկանց համեմատ առավել հուզական են, իսկ վերջինս հանդիսանալով տոն երևույթի կարևորագույն հատկանիշը, բնականաբար, նրա ակտիվ մասնակցության անհրաժեշտ նախապայմաններից է»³: Այս ակտիվ մասնակցությունն էլ արդեն տեղափոխվել է նաև առևտուրը ձեռնարկելու ոլորտ: Միայն մասնաբերի գնումն է ընտանիքի տղամարդու վրա դրված, սակայն ազգագրական դիտարկումներից էլ ներկայումս պետք է փաստել, որ դա էլ համեմատաբար առանց տանտիկնոջ միջամտության չի անցնում: Խորհրդային տարիներին Սիսիանում կառուցած շուկան այսօր դատարկ է, հիմնական առևտուրը կատարվում է «Կամարների տակ» կոչված վայրում: Այստեղ բացի խանութներից բացօթյա առևտուր է նաև կատարվում: Շրջակա գյուղերի համար, որպես առևտրի կենտրոն ևս այս վերոնշյալ «Կամարների տակն» է հանդիսանում: Այսպես. նախաամանորյա գործառույթների մեջ է մտնում «մի հատ խանութներով պատվելը»: Սա իր կարևոր դերն ունի, քանի որ այս «խանութներով պատվելուց» հետո է որոշվում, թե ինչ պետք է այս տարի գնել և ինչը՝ ոչ, կամ թե որ խանութում որ ապրանքն է առավել հարմար գներով վաճառվում: Նշենք, որ այդ մասին «խանութներում պատվողները» տեղյակ են պահում իրենց հարազատներին, որպեսզի սրանք էլ իրենց հերթին առավել ձեռնտու գնումներ կատարեն: Այնուհետև երկրորդ փուլում՝ նախահաշվարկներ, ապա «խանութներում պատվելուց» հետո, սկսվում է առևտրի թե՛ շրջանը, որի ժամանակ գնում են այն ամենը, ինչն ըստ իրենց նախատոնական վերջին օրերին կամ վերջացած է լինելու, կամ էլ առավելագույնս թանկացած: Սրա հետ մեկտեղ թե՛ հարևանների, թե՛ բարեկամների շրջանում պայմանավորվում են՝ եթե բարեկամ-հարևաններից որևէ մեկը անասուն մորթելիս լինի, իրենց անպայման այդ մասին տեղեկացնեն, իսկ նրանք, ովքեր պետք է անասուն մորթեն, իրենց հերթին կատարվի մորթված կենդանին օրը անասուն են մորթելու, որպեսզի ավելի արագ կատարվի մորթված կենդանու մսի վաճառքը, քանի որ անասուն մորթողների տոնական ծախսերի հիմնական նու մսի վաճառքը, քանի որ անասուն մորթողների տոնական ծախսերից: Ամբողջ գնված ապրանքները եկամուտը ստացվում է հենց մսի վաճառքից: Ամբողջ գնված ապրանքները պահվում են սառնարաններում, մառաններում: Նախաամանորյա պատրաստու-

¹ Խառատյան-Վառքեյան Հ., Հայ ժողովրդական տոները, Երևան, 2005, էջ 21:

² Լալայան Ե., էջ 248:

³ Մկրտչյան Ա., էջ 154:

թյունների ամբողջ ընթացքը կարելի է բաժանել երկու շրջանի.

1. Դեկտեմբերի 1-20 ընկած հատվածը հիմնականում առևտրի շրջանն է, այս ընթացքում հիմնական տոնական պատրաստությունը կենտրոնացված է հենց առևտրի վրա,

2. Դեկտեմբերի 21-28 ընկած հատվածը Ամանորի նախապատրաստման բուն շրջանն է, այս ընթացքում արդեն հիմնական ուշադրությունը կենտրոնացված է տոնական կերակուրների, քաղցավեցիքի, թխվածքների պատրաստման վրա:

Առավել ակտիվ պատրաստություններ են տեսնում այն ընտանիքները, որոնցում անցնող տարում մահացող կամ անուսնացող է եղել, եթե այդ տարվա ընթացքում մահացել է ընտանիքի անդամներից որևէ մեկը, ապա դեկտեմբերի 30-ին բոլոր հարազատները, բարեկամները, հարևանները հավաքվում են տվյալ տուն և տեղի է ունենում հիշատակի արարողություն: Այդ օրը ննջեցյալի հիշատակը հարգելու եկածները իրենց հետ բերում են հիմնականում օղի: Հիշատակի արարողությունը կազմված է երկու մասից: Որպես առաջին մաս հանդես է գալիս «գերեզմաններ բարձրանալը», ննջեցյալի շիրմին խունկ ծխեցնելը: Այստեղ առավել մտերիմ հարազատները մոտենում են գերեզմանաքարին և սկսում են պատմել անցած տարվա կատարվածների, հանգուցյալի՝ «իրենց լքած շրջանից» հետո տեղի ունեցած իրադարձությունների մասին (այս ամենը հիմնականում անծնական ազգագրական դիտարկումներից ելնելով ենք ներկայացնում): Դրանից հետո բոլորը հերթով մոտենում են և երեք անգամ խունկ գցում վառվող կրակի մեջ և անցնում գերեզմանաքարի կողքով, ձեռքը դնում են գերեզմանաքարի վրա: Սա ողջույնի և հրաժեշտի ժեստ է, քանի որ գերեզմանաքարին դիպչում էին գերեզման գալուց և վերադառնալուց: Հարգանքի դրսևորում է գերեզմանաքարի վրայի և կողքերի մոլախոտերը հանելը, որը կանայք են անում այն ժամանակ, երբ տղամարդիկ խունկի կրակն են փորձում վառել: Հետաքրքիր է նաև այն, որ այդ խունկի կրակը փորձում են վառել նրանք, ովքեր վերջին շրջանում ամենաքիչն են այցելել ննջեցյալի շիրմին, դրանով կարծես քավում են իրենց մեղքը այն բանի, որ չեն այցելել նրան: Իսկ սովորաբար այդ կրակը վառում են այդ գործի փորձն արդեն ունեցող երիտասարդները, որպեսզի այդ տեխնիկական գործողության վրա շատ ժամանակ չծախսվի: Երբ այս ամենը ավարտվում է, նրանք ովքեր «բարձրացել» էին գերեզմաններ, հրավիրվում են տուն: Այստեղից սկսվում է հիշատակի արարողության երկրորդ մասը: Տուն վերադառնալուց հետո, երիտասարդ աղջիկներից երկուսը (որոնք գերեզմաններ չեն գնացել, որպեսզի օգնեն հյուրասիրության պատրաստություն տեսնողներին) սրբիչը ուսներին, մեկական դույլ ջուր կողքերին, դռների մոտ դիմավորում են գերեզմաններից եկողներին և նրանց ձեռքերին ջուր են լցնում: Այս մասին Ստ. Լիսիյանը գրում է. «Թաղման մասնակիցները ժամհացի համար տուն վերադառնալով պիտի ձեռներն անպատճառ լվանային, պարզ է՝ ննջեցյալի հետ ունեցած շփումով մահվան վարակը իրենց հետ տուն բերած չլինելու և դրանով նրա վերադարձը չոյուրացնելու համար. նրա հետ նյութական առարկայական կապը կտրած լինելու համար: Այժմ էլ որպես վերապրուկ բոլոր հայկական շրջաններում հուղարկավորության մասնակիցները գերեզմանատնից տուն վերադառնալով նախ և առաջ լվանում են ձեռները, բայց արդեն լոկ որպես աղաթ՝ չկապելով բնավ դրա հետ որևէ սնոտի մտայնություն»¹: Այժմ էլ արարողության մասնակիցները գտնում են, որ այդ ամենի հիմնական բովանդակությունը նրանում է, որ գերեզմաններից եկողները իրենց հետ «ցավը, վիշտը, լացը դռնից ներս չբերեն»: Հերթով լվացվելով՝ հրավիրվածները անցնում են տուն, որտեղ արդեն հյուրասիրության համար պատրաստված է ճոխ սեղան: Սիսիանում սեղանին մոտենում են առաջինը տղամարդիկ, իսկ կանայք այդ ընթացքում, փորձում են օգնել տան կանանց ճաշերը մատուցելու: Արդյունքում տղամարդիկ սեղանի մի կողմում են հայտնվում, իսկ կանայք՝ մյուս: Երբ բոլոր

(հիմնականում տղամարդիկ) արդեն տեղավորված են լինում սեղանի շուրջ, տան տղամարդկանցից ավագը (որոշ դեպքերում նաև որդիներից ավագը, կամ այն որդին, ով այդ տան տերն է. կարող է լինել և ոչ ավագ որդին) նստած տեղից վեր է կենում, սեղանի շուրջ հավաքվելու առիթի մասին է խոսում և ապա հավաքվածներին առաջարկում (հորդորում է, որպեսզի ակտիվ լինեն, քանի որ հանգուցյալի՝ իր հոր, եղբոր կամ մոր) կենդանի հիշատակի առիթով են հավաքվել: Սեղանի շուրջ հավաքվածների կենացների բովանդակությունը հիմնականում հանգուցյալի ասորած կյանքի դրվագներին, խոսքերին են վերաբերում և բացարձակ տարբերվում է հոգեհանգստի «սեղանին ասվող» կենացներից: Սեղանը մի քանի անգամ «թարմացնելուց» հետո, որը նշանակում է ճաշի տեսականիների կրկին մատուցում, «սուրճի» սեղան է բացվում՝ քացրավեցիքներով, ամանորյա թխվածքների տեսականիով, մրգերով, աղանդով, որից հետո էլ «ցրվում են ամենքը իրենց տներով»:

Այն ընտանիքները, որոնք այդ տարի տղա կամ աղջիկ էին անուսնացրել, պետք է ճոխ պատրաստություն տեսնեին, քանի որ փոխայցելություններ են սպասվում: Նախ նշենք, որ սա առավել շատ կարելի է կապել հարսանիքի հետ, քանի որ այդ փոխայցելությունները ևս կրում են նոր բարեկամության ամրապնդման միտում և կոդից ճոխ պատրաստություն են տեսնում, նվերներ (հիմնականում հագուստ, կողմից ճոխ պատրաստություն են տեսնում, նվերներ (հիմնականում հագուստ, կարդեր) են պատրաստում թե իրենց աղջկա և թե փեսայի համար ու արդեն նախօրոք ժամ պայմանավորված լինելով՝ այցելում են խնամունց տուն:

Վերոնշյալ ընտանիքներից բացի մնացյալ ընտանիքները դեկտեմբերի 30-ին հիմնականում խաշի պատրաստություն էին տեսնում: Խաշի պատրաստությունը տեսնելուց առաջ մոտ բարեկամներին տեղյակ են պահում, որ այս ինչ օրը տվյալ մարդիկ հրավիրված են խաշ ուտելու: Կան ընտանիքներ, ովքեր խաշ ուտելու են հրավիրում պաշտոնավոր մարդկանց: Այդ դեպքում ընտանիքի անդամներն ավելի շուտ են խաշը ուտում և հյուրասիրության ժամանակ միայն տանտերն է նստում այդ պաշտոնավոր հյուրերի հետ: Խաշի հրավիրվածները իրենց հետ բերում են օղի, սակայն եթե այդ հրավիրվածները միմյանց մոտ բարեկամներ են, ապա իրենց հետ կարող են բերել խաշի հետ մատուցվող «մի քանի կլոխ բոխկ», սխտոր և այլն: Սովորաբար մինչև Նոր տարի «խաշի» շատերն են հրավիրվում, նույնիսկ պատասխանում է, որ մի քանի անգամ են սեղան «բցում» և «հավաքում»: Ճաշկերույթից հետո հում է, որ մի քանի անգամ են սեղան «բցում» և «հավաքում»: Դրանից հետո, հյուրերին մատուցվում է թեյ, որպեսզի խաշը «հեշտ մարսեն»: Դրանից հետո, հյուրերը մի քանի ժամ զբաղվում են նարդիով, թղթախաղով և ապա ցրվում իրենց տները, որպեսզի չխանգարեն հյուրընկալ ընտանիքի ամանորյա պատրաստություններին:

Դեկտեմբերի վերջին օրերը հատկանշական են նաև նրանով, որ սիսիանցիներն այդ օրերին այցելում են եկեղեցի: Որոշակի օր նշված չէ եկեղեցի այցելության համար և դրա համար, վերջին շաբաթվա այն օրը, որը առավել հանգիստ է և տնային գործերն էլ արդեն ավարտած են լինում, այցելում են եկեղեցի հիմնականում ամբողջ ընտանիքով, բոլորը մեկական մոմ են վառում՝ եկող տարին հաջող լինելու բաղձանքով: Իսկ հետո այդ ամբողջ օրը կարող են անցկացնել զբոսանքներով քաղաքում, կամ էլ անցնել առօրյա հոգսերին: Բացի մոմավառությունից, եկեղեցի քաղաքում, կամ էլ անցնել առօրյա հոգսերին: Բացի մոմավառությունից, եկեղեցի այցելությունն ոչնչով չի առանձնանում, նույնիսկ որևէ եկեղեցական արարողություն տեղի չի ունենում: Նման այցելությունները շարունակվում են մինչև դեկտեմբերի 31-ը:

Ամանորյա տոնակատարության բաղկացուցիչ մաս է կազմում հեռուստացույցը, որը դրվում է այն սենյակում, որտեղ ամանորյա «սեղանն է գցվում», իսկ եթե հեռուստացույցը այլ սենյակում է գտնվում, այն տեղափոխում են ամանորյա տոնակատարությունների անցկացման սենյակ: Նույնիսկ Նոր տարին սկսվում է այն պահին,

¹ Լիսիյան Ստ., Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 210-211:

երբ հեռուստացույցով ժամը տասներկուսն է լրանում ու հենց հեռուստահաղորդումների ժամանակով սկսում են տոնել այն: Ամանորյա սեղանը սկսում են պատրաստել հիմնականում դեկտեմբերի 31-ի օրվա երկրորդ կեսից սկսած: Եթե բազմանդամ ընտանիք է, ապա տան տղամարդիկ նստարաններ են բերում, «սեղան մեծացնում», իսկ տան տղա երեխաները ամեն կերպ փորձում են օգնել մեծերին: Կանայք այդ ընթացքում արդեն սկսում են եփել մսեղեն կերակուրները, քանզի մի քանի օր առաջ թխվածքեղենն ու «սալաթները» արդեն «սարքած են» լինում: Աղջիկ երեխաների, երիտասարդ հարսների հիմնական ամանորյա նախապատրաստությունը տան «ուրուռկա»-ի վրա է կենտրոնացված: Նրանք զբաղված են լինում տունը մաքրել-հավաքելով: Այդ օրը տոնածառը զարդարող լույսերը ամբողջ օրվա ընթացքում վառ են լինում, որը նախատոնական տրամադրության ցուցիչ է: Նշենք նաև, որ ամանորյա պատրաստության կարևոր բաղադրիչներից է գեղեցկության սրահների այցելությունը: Երբ կերակուրները համարյա պատրաստ են լինում՝ տան կանայք «իրար հերթափոխելով», որպեսզի ոչ գործը կանգնի, ոչ էլ իրենց՝ գեղեցկության սրահների այցելությունը ուշանա, հաճախում են վարսավիրանոցներ: Կան ընտանիքներ, որտեղ ուղղակի երիտասարդ աղջիկները կամ հարսները հարդարում են տնեցիների մազերը՝ և վերջ: Որոշ բազմազավակ ընտանիքներում այդ օրվա համար հանդես է պատրաստվում, որի ժամանակ երեխաները արտասանում և երգում են, տոնական նվերներ են փոխանակվում: Սակայն այդ երևույթը Սիսիանում հազվադեպ է: Քաղաքում կազմակերպվելիք տոնական միջոցառումները ևս հազվադեպ են, սակայն ամանորյա գիշերը երիտասարդները և երեխաները «իջնում» են քաղաքային հրապարակ, քանի որ այստեղ մեծ եղևնի է դրվում, լույսերով զարդարվում և այդ ժամերին այստեղ, ինչպես հանրապետության բոլոր մնացած քաղաքներում, տոնական համերգ է տրվում: Սակայն ոչ բոլորն են հետաքրքրված այդ հանդիսավորությանը ներկա գտնվելու և հիմնականում ամանորյա առաջին օրը բոլորը ձգտում են լինել իրենց տներում, ինչպես ավանդական կենցաղում էր:

Երբ ամբողջ նախապատրաստությունը ավարտված է լինում, կամ արդեն մոտենում է ժամը 24:00-ը, տան բոլոր անդամները սկսում են հավաքվել սեղանի շուրջ և նախապատրաստվել տոնական խնջույքին: Կերուխումը սկսում է հեռուստացույցով ՀՀ նախագահի և Ն.Ս.Օ.Տ.Տ. Կաթողիկոսի ամանորյա շնորհավորանքների հնչելուն և ամանորյա հաղորդումների սկսվելուն պես: Տանտերը վերցնում է բաժակը և շնորհավորում տան անդամների նոր տարին, ցանկանում նրանց բոլորին հաջողություններ: Սեղանին այդ օրը առատ խմիչք է լինում (կոնյակ, գինի, օղի, շամպայն և այլն), առաջին շնորհավորանքների համար բոլորի բաժակները լցնում են շամպայն: Իսկ դրանից հետո, արդեն ով ինչ ցանկանում է՝ այն էլ խմում է: Այդ օրը պատանիներին ևս թույլ են տալիս խմել, թեկուզ մեկ բաժակ: Դա նաև տոնական «քաշած օղու, գինու» փորձարկման օր է: Երբ էլ դրանք պատրաստված լինեն, հատուկ Ամանորի համար մի քանի շիշ պահում են, մեկը Ամանորի գիշերվա, իսկ մնացածը հարգարժան հյուրերին հրամցնելու համար: Առաջին բաժակով շնորհավորելով զալիք Նոր Տարին՝ երիտասարդները երազանքներ են գրում փոքր թղթերի վրա և զգում շամպայնի բաժակի մեջ և խմում՝ հավատացած լինելով, որ զրված երազանքները տարվա ընթացքում կատարվելու են: Այդ օրը նաև չամուսնացած աղջիկները կանգնում են տան մուտքի դռան մոտ և կոշիկը «միջքանց» նետում, եթե կոշիկը ոտնաթափ մասով ընկնում է դեպի տան կողմը, ուրեմն այդ տարի էլ չի ամուսնանալու, իսկ եթե դեպի դուրս՝ փողոց, ուրեմն՝ ամուսնանալու է: Նույնիսկ դուրս ընկնելու դեպքում էլ ուղղությունն են որոշում և սովյալ ուղղության վրա գտնվող հարևանների տղաներին են հաշվում, թե նրանցից որն է արդեն ամուսնանալու տարիքում և ըստ դրա էլ սկսում են արդեն այդ «ընտրյալ» տղայի առավելություններն ու թերությունները քննարկել:

Ամանորյա տոնական հացկերույթի ընթացքում կարևոր տեղ ունի հյուրեր ընդունելը, հյուրընկալությունը: Սիսիանում, Նոր տարվա առաջին երեք օրը հարազատ-

ներին ու բարեկամներին հյուր գնալու կամ հյուրասիրության կանչելու օրերն են: Հյուրընկալության գնալիս իրենց հետ վերցնում են հիմնականում տուփով շոկոլադե կոնֆետներ: Նշենք նաև, որ հյուրընկալությունը հիմնականում լինում է պայմանավորված և այն փոխայցելությունների տեսք ունի: Այսինքն՝ հյուրընկալվում են հիմնականում նրանց, ովքեր այցելել են իրենց, առաջինը այցելում են տարիքով ավագներին, իսկ նրանցից փոխայցելություն չեն սպասում, քանի որ ավագներին այցելելը և Նոր տարին շնորհավորելը դա հարգանքի նշան է հանդիսանում: Մնացյալ դեպքերում այցելում են հարազատներից նրան, ով այդ օրն արդեն պատրաստվել է հյուրասիրությանը և հետո հերթով պայմանավորվելով փոխայցելություններ էլ են լինում: Սակայն պատահում են դեպքեր, երբ այդ փոխայցելություններ էլ են լինում: Սպասում են պատահներով չի այցելում իրենց տուն, ապա դա խռովության պատճառ կարող է դառնալ, մանավանդ եթե այդ չներկայացողը պարզվում է՝ մեկ ուրիշի տուն է գնացել հետևյալ օրը: Հյուրընկալվելուն նախապես պայմանավորվելու սովորույթը հիմնականում կապված է սոցիալ-կենցաղային պայմանների հետ: Այսպես կան ընտանիքներ, որոնց այցելությունից առաջ տեղեկացնելը կարևորվում է նրանով, որ ելնելով սոցիալական դժվար պայմաններից ճիշտ պատրաստություն տեսնելը բարդ խնդիր է հանդիսանում: Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ Ամանորը դա Սիսիանում նշվող տոներից ամենատարածվածն ու սպասվածն է, այդ տոնի զարգացումը տեղի է ունեցել խորհրդային շրջանում և շատ տարրեր ուղղակի մնացել են հենց այդ շրջանից:

Хорен Григорян

СОВРЕМЕННОЕ ПРАЗДНОВАНИЕ НОВОГО ГОДА В СИСИАНЕ

Праздники - это сложные социальные и бытовые явления. Каждый праздник представляет из себя уникальную микроструктуру, где в присутствии практически все элементы быта и культуры: жилище, дом, родовые, семейные и социальные отношения, память о предках, свадебные обряды, музыкальные произведения, игры, еда, обряды и традиции, связанные с традиционными фазами бытовой культуры. Одним из таких праздников является «Аманор» - Новый Год, который отмечается шикарным образом и содержит в себе сочетание традиционных и современных элементов. Надо отметить, что «Аманор» является самым распространенным и ожидаемым праздником в городе Сисиан. Этот праздник развивался в течение советского периода, и в нем остались элементы с этого периода. Изучение «Аманора» позволит выявить важные данные для изучения различных слоев советских праздников.

Khoren Grigoryan

MODERN CELEBRATION OF THE NEW YEAR IN THE TOWN OF SISIAN

The holidays are complicated social and cultural events. Every holiday is a unique microsystem, where in some way or other there are almost every elements of social life and culture; settlement, house, kinsfolk-neighbourly-family relationships, remembrance of ancestors, marriage rituals, music, games, food, traditional phases of economic activities with the rituals and customs memorizing those activities, etc.

Nowadays the New Year is one of the holidays, which is celebrated with great splendour and bears the syntheses of the traditional and the new. On the whole we can note that the New Year is the most widespread and awaited holiday from those of celebrated in Sisian. It was developed during the Soviet period and many elements have remained from that period. The study of the New Year will give an important material for the study of various sections of holiday system of the Soviet period.